



ՏԵՂԵԿԱԳԻՐ

Թողարկում թիվ 1



Այս համարում՝

- + Աղքատություն հաղթահարում
- + Կենսաթոշակներ
- + Հակակոռուպցիոն քաղաքականություն
- + Հագարանյակի մարտահրավեր ծրագիր
- + ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի 2007թ. ընտրություններ
- + Սոցիալական ծրագրեր
- + Եվրոպական հարևանության քաղաքականություն, զարգացումները
- + Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր

Աղքատություն հաղթահարում

ՀՀ կառավարության գործունեության նոր ծրագրի իրականացմամբ, որը մշակվել է, հիմք ընդունելով ԱՀՌ-Ծ հիմնական դրույթները, կառավարությունը 2007-2012 թվականների ընթացքում ակնկալում է աղքատության էական հաղթահարում՝ արդյունքում ապահովելով 11.2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության և 1.6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ:

Կենսաթոշակներ

ՀՀ կառավարությունն իր գործունեության ծրագրում նախատեսել է 2007-2012 թվականների ընթացքում կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացում՝ 2012 թվականին աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակի ապահովմամբ:

Հակակոռուպցիոն քաղաքականություն

2007թ. մայիսի վերջին Թրանսփարենսի ինթերնեյշնալ կազմակերպության կողմից հրատարակվել է «Կոռուպցիայի գլոբալ հաշվետվություն 2007 – կոռուպսիոն դատական համակարգերում» հաշվետվությունը:

Հազարամյակի մարտահրավեր ծրագիր

Հունիսի 11-12-ը Հայաստանում էր Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի Գլխավոր գործադիր տնօրեն, դեսպան Ջոն Դանիլովիչը:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի 2007թ. ընտրություններ

Մոտենում է Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) առաջին գումարման կազմի (2006-2007) լիազորությունների ավարտի ժամկետը և ըստ ՀՄՀ պահանջների պետք է անցկացվեն նոր ընտրություններ 2007-2008թթ. ՇԽ ձևավորելու համար:

Սոցիալական ծրագրեր

ՀՀ կառավարությունն ընդունել է Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին որոշում:

Եվրոպական հարևանության քաղաքականություն, զարգացումները

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագիրն աջակցում է տնտեսական աճին Հայաստանում:

Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր

2006-2011թթ. ընթացքում Սըրվիսիզ գրուփ (TSG) ընկերության կողմից իրականացվող ԱՄՆ ՄՁԳ Հայաստան Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄՊՀՀ) ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը, կատարելագործել ՀՀ կառավարության ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները և ընդլայնել սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կարողությունները:

Աղքատություն հաղթահարում

ՀՀ կառավարության գործունեության նոր ծրագրի իրականացմամբ, որը մշակվել է, հիմք ընդունելով ԱՀՌԾ հիմնական դրույթները, կառավարությունը 2007-2012 թվականների ընթացքում ակնկալում է աղքատության էական հաղթահարում՝ արդյունքում ապահովելով 11.2 տոկոսից ցածր ընդհանուր աղքատության և 1.6 տոկոսից ցածր ծայրահեղ աղքատության մակարդակ: Համեմատության համար նշենք, որ համաձայն Ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացված «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» արդյունքների, 2005 թվականին աղքատության ընդհանուր մակարդակը եղել է 29.5, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.6 տոկոս (սրանք վերջին առկա տվյալներն են):

2006 թվականի սկզբից կառավարությունը նախաձեռնել է ԱՀՌԾ վերանայման գործընթացը, որը մինչ այժմ չի հասցրել իր ավարտին: Սկսվելով դեռևս ոչ նախըտրական տարում՝ վերանայումն անցավ 2007 թվականի Ազգային Ժողովի ընտրություններով, և առանց ԱՀՌԾ իրականացման վերաբերյալ նախորդ կառավարության հաշվետվության, այն դրվեց նոր կառավարության գործունեության ծրագրի հիմքում:

Այսօր կառավարությունը, որպես ԱՀՌԾ-2-ի ընդունման նախնական ժամկետ, հայտարարում է հոկտեմբեր ամիսը, սակայն բացառված չէ, որ այն կտեղախոյվի նաև գալիք տարի՝ դառնալով նախագահական ընտրությունների նախընտրական ծրագիր:

Չնայած աղքատության հաղթահարումը որպես գերնպատակ ամրագրվել է կառավարության գործունեության ծրագրով, այնուամենայնիվ ԱՀՌԾ-ն որպես ծրագիր դադարել է գործել, որովհետև ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումները նախատեսված էին միայն 2004-2006 թվականների համար: Իսկ ծրագրի առաջընթացը գնահատվում է միմիայն վիճակագրական ամենամյա հետազոտություններով: ԱՀՌԾ իրականացման վերջին հաշվետվությունը կառավարությունը հրապարակել է 2005 թվականին¹: Իսկ ինչ վերաբերում է ծրագրի մոնիտորինգին, ապա ԱՀՌԾ աշխատանքային խումբը քննարկել և հաստատել է դոնորների² աջակցությամբ մշակված «ԱՀՌԾ մոնիտորինգի և գնահատման համակարգի կատարելագործման աշխատանքների ամփոփ ծրագիր»³, որը սակայն մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում կասկածի տակ է դնում ռազմավարական ծրագրերի մոնիտորինգի և առավել ևս գնահատման համակարգի կայացումը Հայաստանում:

¹ ԱՀՌԾ իրականացման հաշվետվություն 2004 – 2005 թվականի առաջին կիսամյակ, Երևան 12005

² Համաշխարհային բանկ, GTZ, DFID, Միզացյալ ազգերի զարգացման ծրագիր

³ <http://www.prsp.am>

Կենսաթոշակներ

ՀՀ կառավարությունն իր գործունեության ծրագրում նախատեսել է 2007-2012 թվականների ընթացքում կենսաթոշակների մակարդակի ամենամյա բարձրացում՝ 2012 թվականին աղքատության ընդհանուր գիծը 1.5 անգամ գերազանցող միջին կենսաթոշակի ապահովմամբ: Նախատեսվում է կենսաթոշակային գործող համակարգի հետագա կատարելագործում՝ սոցիալական պաշտպանության մյուս ծրագրի հետ ներդաշնակեցնելու նպատակով:

Չիլիի կենսաթոշակային համակարգն աշխարհում ամենանորարականներից մեկն է համարվում: Այս փորձն է կիրառել օրինակ Ռուսաստանն իր կենսաթոշակային համակարգի բարեփոխումներում: Հայաստանի կառավարությունը նույնպես հակված է հենց այս փորձի կիրառմանը:

Չիլիում կենսաթոշակային բարեփոխումներ իրականացնելու դրդապատճառը հարկային համակարգում առկա խնդիրներն էին: Բանն այն էր, որ աշխատող քաղաքացիների կենսաթոշակային մոծումները չէին բավականացնում կենսաթոշակառուներին կատարվող վճարումներին, և պետությունն անընդհատ ստիպված էր լինում լրացնել միջոցները, ինչը համապատասխանում է հայաստանյան իրականությանը: Իսկ ինչու՞ն էր կայանում բարեփոխման նորարարությունը: Մոդելը բավականին պարզ էր՝ կուտակային համակարգ: Կենսաթոշակային գումարների գոյացման համար պատասխանատվությունն ընկնում է հենց աշխատողի վրա: Յուրաքանչյուր աշխատող ունի անհատական հաշվեհամար, որին էլ կատարվում են ամենամյա վճարումներ՝ աշխատավարձի 10 տոկոսի չափով: Այնուհետև այդ միջոցները տնօրինվում են մասնավոր ապահովագրական ընկերության կողմից, որը նույնպես ընտրում է աշխատողը:

Ներկայումս կենսաթոշակային բարեփոխումները գտնվում են քննարկման փուլում, բայց մի բան հստակ է, որ անհրաժեշտ է անցում կատարել կուտակային կենսաթոշակային համակարգի:

Հակակոռուպցիոն քաղաքականություն

2007թ. մայիսի վերջին Թրանսփարենսի ինթերնեյշնալ կազմակերպության կողմից հրապարակվել է «Կոռուպցիայի գլոբալ հաշվետվություն 2007 – կոռուպսիոն դատական համակարգերում» հաշվետվությունը:

Համաձայն վերոնշյալ հաշվետվության կոռուպցիան խաթարում է դատական համակարգերի բնականոն գործունեությունն ամբողջ աշխարհում, քաղաքացիների համար դատական համակարգն անմատչելի է դարձնում և ոտնահարում է արդար և անկողմնակալ դատավարություն ունենալու մարդկային տարրական իրավունքները:

«Օրենքի առաջ իրավահավասարությունը դեմոկրատական հասարակության հիմնաքարն է: Երբ դատարանները կոռումպացված են ազահ կամ քաղաքական շահադիտությամբ,

արդարադատության նժարը շեղված է և շարքային քաղաքացիները տուժում են - ասել է Թրանսփարենսի ինքերնեյշնայի տնօրեն Հուգետ Լաբելը - Դատական կոռուպցիան նշանակում է, որ ամենդի ձայնը մնում է չլսված, մինչ մեղավորը մնում է անպատժելի:

Այս հաշվետվությունն արձանագրում է, որ դատական կոռուպցիան խաթարում է տնտեսական աճը՝ պոտենցիալ ներդրողների վստահությունը վտանգելով և խոչընդոտում է աղքատության հաղթահարման նախաձեռնությունները:

Համաձայն հաշվետվության, Հայաստանը՝ Քուվեյթի, Շվեյցարիայի, Թուրքիայի, Կոստա Ռիկայի, Ավստրիայի, Ճապոնիայի, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության, Տայվանի և Իսրայելի հետ մեկտեղ գտնվում է դատական դե ֆակտո⁴ անկախություն ունեցող երկրների տասնյակում:

Հաշվետվության մեջ կատարված է հայ դատավորի հետ անցկացված հարցազրույցից մեջբերում, այն է. «Հայ դատավորի կարծիքով, դատական համակարգի ուժեղացման նպատակով դատավորին ցմահ պաշտոնի նշանակելու առաջարկը կարող է չաշխատել: - Ինչպե՞ս կարող եմ ես լինել անկախ, երբ ապրում եմ հասարակությունում: Ենթադրենք, իմ ընտանիքի անդամը ծանր հիվանդացել է և հատուկ բուժման կարիք ունի: Իհարկե ես պետք է փորձեմ գտնել ինչ-որ մեկին Առողջապահության նախարարությունում և խնդրել նրան գտնել բուժման ձևը: Այդ անելով՝ ես ավտոմատ կերպով կախյալ վիճակում կհայտնվեմ այդ մարդուց և պարտավորված կլինեմ անել այն ամենն, ինչ նա երբևիցե կխնդրի ինձ»:

Հազարամյակի մարտահրավեր ծրագիր

Հունիսի 11-12-ը Հայաստանում էր Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի Գլխավոր գործադիր տնօրեն, դեսպան Ջոն Դանիլովիչը: Այցի առաջին օրը դեսպան Դանիլովիչը մասնակցեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակի բացման հանդիսավոր արարողությանը, հանդիպումներ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Հազարամյակի Մարտահրավեր հիմնադրամի Հայաստանի Համաձայնագիրը կնքվել է անցած տարվա մարտին և գործողության մեջ է մտել սեպտեմբերին: Այս պահի դրությամբ արդեն փոխանցվել է շուրջ 6 միլիոն ԱՄՆ դոլար: 25 միլիոնի պայմանագրեր կան կնքված, որոնց ֆինանսավորումը շուտով մատչելի կդառնա: Մինչ օրս ծրագրի իրականացման աշխատանքների ընթացքից ամերիկյան կողմը գոհ է և առաջիկայում էլ ակնկալում է հաջողությամբ շարունակել աշխատանքներն այստեղ՝ Հայաստանում: Ամերիկյան կողմի համար նաև ոգևորիչ էր տեսնել մայիսի 12-ին կայացած ընտրություններում գրանցված առաջընթացը և հույս են հայտնել, որ առաջընթացի հետ միասին ժողովրդավարական գործընթացները նույնպես առաջընթաց կապրեն:

⁴ Դե ֆակտո ցուցանիշը հիմնվում է երկրների փորձի վրա՝ հաշվի առնելով այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են դատավորների գործունեության միջին արդյունավետ երկարությունը, դատավորների աշխատանքից ազատման դեպքերի թիվը և դատավորների իրական եկամուտները:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի 2007թ. ընտրություններ

Մտենում է Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) առաջին գումարման կազմի (2006-2007) լիազորությունների ավարտի ժամկետը և ըստ ՀՄՀ պահանջների պետք է անցկացվեն նոր ընտրություններ 2007-2008թթ. ՇԽ ձևավորելու համար:

ՇԽ կողմից ձևավորված աշխատանքային խումբը, համագործակցելով հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ, մշակել է ՇԽ ընտրությունների կարգի նախագիծը, որը տեղադրվել է ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի 2007թ. ընտրությունների կարգը

1. Ընդհանուր դրույթներ

2006թ. մայիսի 2-ին ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ընտրվել են ՇԽ 15 անդամներ, որոնք մեկ տարվա ընթացքում բավարար գործունեություն են ծավալել իրականացվող ծրագրերի թափանցիկության, հրապարակայնության ապահովման, ինչպես նաև գործունեության ծավալման համար իրավական հիմքերի ստեղծման ուղղությամբ:

Հաշվի առնելով ՀՄՀ ծրագրի պահանջները՝ յուրաքանչյուր ծրագրային տարում տեղի են ունենում ՇԽ անդամների թափուր տեղերի համար ընտրություններ: Այս գործընթացները պայմանավորված են որոշ հանգամանքներով՝

ա) ՇԽ անդամները պաշտոնավարում են մեկ տարի ժամկետով պայմանով, որ նրանք կարող են նաև վերընտրվել,

բ) ՇԽ 2006-2007թթ. գումարման կազմի լիազորություններն ավարտվում է և ժամկետը համարվում է սեպտեմբերի 29, 2007,

գ) ՇԽ անդամների թիվը չպետք է գերազանցի 15 անդամներից

դ) ՇԽ կազմից 5 անդամները, ովքեր ընտրվել էին երկու տարի ժամկետով, շարունակում են իրենց պարտականությունները (Հ. Ջավադյան-Կիրառական հետազոտությունների և ագրոքիզնեսի հիմնադրամ, Հ. Աբրահամյան - Հայաստանի հաշվանդամների «Փյունիկ» միություն, Կ. Նազարյան - Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ, Ն. Վարդանյան - «Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ, Լ. Ներսիսյան - «Ա. Գ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ):

2. Շահառուների խորհրդի անդամներին ընտրությանը ներկայացվող պահանջները

- ✓ Անցկացնել մեկ ընդհանուր ընտրություն բոլոր շահառու խմբերի համար, սակայն ապահովել ՋՕԸ-երի, ֆերմերային տնտեսությունների և համայնքային ներկայացուցիչների ներկայացուցչականությունը.
- ✓ Համագործակցել հիմնական ՀԿ խմբերի հետ՝ ընտրություններն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով.
- ✓ Մշակել ընտրությունների անցկացման ՀԿ-երի կողմից ընդունելի տարբերակ և քննարկել դրանք ՇԽ-ի և լայն հասարակության հետ.
- ✓ ՇԽ ընտրություններին ներգրավել քաղաքացիական հասարակության լայն խմբերին (բացառությամբ քաղաքական կուսակցությունների).
- ✓ Թույլատրել ՀՀ-ում գրանցված միջազգային կազմակերպություններին մասնակցել ընտրություններին՝ դիտորդի կարգավիճակով.
- ✓ Կազմակերպությունը ընտրություններին թույլատրել ներկայացնելու նրա կողմից լիազորված անձի միջոցով.
- ✓ Սահմանել չափանիշներ ՇԽ ընտրություններին մասնակցության հայտ ներկայացնող կազմակերպությունների համար:

Հայտը պետք է ներառի.

- ✓ Տեղեկատվություն կազմակերպության գործունեության և առաքելության մասին (մինչև 1 էջ), կազմակերպության գրանցման վկայականի պատճեն.
- ✓ Կազմակերպության կողմից ներկայացվող լիազորված անձի տվյալները.
- ✓ Հայտը պետք է կնքվի կազմակերպության կնիքով և հաստատվի ղեկավարի ստորագրությամբ:

3. Ընտրության իրավունքը

Ընտրությանը մասնակցելու իրավունք ունեն ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված, Հայաստանում գործող ՀԿ-ները, սպառողական կոոպերատիվները, ոչ պետական հիմնադրամները, միությունները (բացառությամբ դրանց մասնաճյուղերի), որոնք ընտրություններին մասնակցելու համար մինչև 2007թ. սեպտեմբերի 10-ը ժամը 18.00–ն ՀՄՀ ՇԽ-ի օգնականին կներկայացնեն մասնակցության վերաբերյալ հայտը:

- ✓ Հայտը կարող է ներկայացվել ներկայացուցչի միջոցով կամ ուղարկվել էլեկտրոնային փոստով:
- ✓ Ընտրության մասնակիցների ցուցակը կազմվում է այբբենական կարգով և 2007թ. սեպտեմբերի 11-ից տեղադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական ինտերնետային կայքում www.mca.am հասցեով:
- ✓ Հայտը պետք է վավերացվի կազմակերպության կնիքով և նշվեն կազմակերպության անունից քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող կազմակերպության լիազորված անձի տվյալները:
- ✓ Լիազորված անձը ներկայանում է քվեարկության անձնագրով:

4. Թեկնածության առաջադրումը

Թեկնածությունն առաջադրվում է քվեարկության իրավունք ունեցող կազմակերպությունների կողմից ինքնառաջադրման և/կամ այլ կազմակերպությունների կողմից առաջադրման սկզբունքով: Ինքնառաջադրման կամ այլ կազմակերպությունների կողմից առաջադրման հայտը ներառում է տեղեկատվություն՝ վավերացված կազմակերպության կնիքով և ղեկավարի ստորագրությամբ:

Թեկնածուների ընտրությանը մասնակցելու մերժման դեպքում, հայտը ստանալուց 5 օրվա ընթացքում գրասենյակի կողմից ծանուցվում է կազմակերպությանը՝ հիմնավորելով մերժման պատճառը:

Թեկնածուների ցուցակը կազմվում է այբբենական կարգով և 2007թ. սեպտեմբերի 11-ից նրանց մասին տեղեկությունները տեղադրվում են www.mca.am կայքում:

Թեկնածու չեն կարող առաջադրվել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների Խորհրդում 2006թ. մայիսի 2-ին լիազորությունների 2 տարվա իրավասությամբ ընտրված անդամները, որոնք հիշատակված են սույն կարգի 1-“դ” կետում: Նրանք կարող են ընտրվել ընտրական հանձնաժողովի կազմում:

5. Ընտրությունը

Ընտրության գործընթացը կազմակերպվում է Ընտրական հանձնաժողովի կողմից, որն էլ միաժամանակ ապահովում է ընտրությունների անցկացման թափանցիկությունը, հրապարակայնությունը և ՁԼՄ-րի մասնակցությունը, ինչպես նաև փաստաթղթերի ձևաչափերի մշակումը:

Ընտրական հանձնաժողովը ձևավորվում է ընտրություններից 20 օր առաջ հասարակական կազմակերպությունների ընդհանուր ժողովի կողմից, որի կազմակերպման պատասխանատուն է ՀՄՀ ծրագրի գրասենյակը:

Ընտրական հանձնաժողովը ձևավորվում է ինքնառաջադրմամբ և բաղկացած է 9 հոգուց: Շահառուների խորհրդի կազմում առաջադրվող թեկնածու անձիք իրավունք չունեն լինելու ընտրական հանձնաժողովի անդամ: Ընտրական հանձնաժողովի անդամների ընտրությունը կատարվում է քվեարկությամբ ընդհանուր ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեաթերթիկի հակառակ կողմում, քվեարկության նախորդ օրը ստորագրում են ընտրական հանձնաժողովի անդամները և որից հետո դրանք պահվում են կնքված ծրարներով չհրկիզվող պահարաններում, որը կնքվում և ստորագրվում է հանձնաժողովի նախագահի ու հանձնաժողովի առնվազն երկու անդամների կողմից:

Քվեաթերթիկում նշվում է թեկնածուի անունը, ազգանունը և կազմակերպության անվանումը: Թեկնածուների անունները շարադրվում են այբբենական կարգով: Քվեաթերթիկի վրա նշումները կատարվում են ընտրվողի վանդակի դիմաց (V) նշանով:

Քվեաթերթիկների քանակը բաղկացած է քվեարկությանը մասնակցող ՀԿ-րի քանակից +5%: Ցանկության դեպքում թեկնածուները կարող են քվեաթերթիկի հակառակ կողմում գետեղել իրենց ստորագրությունները (1 օրվա ընթացքում, ընտրության նախորդ օրը, ժ. 14.00-16.00):

Յուրաքանչյուր ընտրող կազմակերպություն ունի քվեարկության առավելագույնը 10 ձայնի իրավունք, և պետք է քվեարկի մինչև 10 անձի օգտին, հակառակ դեպքում այլ նշումով քվեաթերթիկն անվավեր է: Ձայների հավասարության դեպքում ընտրությունը կատարվում ընտրվածների ներկայությամբ նույն օրը ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ:

Ընտրությունը կատարվում է.

- ✓ Մեկ օրում, փակ գաղտնի քվեարկությամբ: Ընտրությունը նախատեսվում է ժամը 9.00-18.00 (անցկացման վայրի մասին տեղեկացվում է լրացուցիչ 20 օր առաջ տրվող հայտարարության մեջ):
- ✓ Ընտրության արդյունքները ամփոփվում են ընտրության օրը, ավարտվում մինչև ժամը 24.00 և հրապարակվում են հաջորդ օրը մինչև ժամը 12.00-ն:
- ✓ ՇԽ-ում ընտրված են համարվում այն 10 թեկնածուները, ովքեր մյուսներից առավել քվեներ են ստացել: Թեկնածուների հավաքած հավասար քվեների դեպքում

առաջնահերթությունները որոշվում են տեղում Ընտրական հանձնաժողովի կազմակերպված վիճակահանությամբ:

- ✓ Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել ՁԼՄ-ը, այլ շահագրգիռ կառույցներ՝ այդ մասին առնվազն մեկ շաբաթ առաջ հայտագրվելու պայմանով:
- ✓ Ընտրությանը մասնակցում է այն թեկնածուները, որոնք մինչև ընտրությունը, եթե օր առաջ ինքնաբացարկ չեն հայտարարել:
- ✓ ՇԽ-ից Կառավարման խորհուրդը ընտրվելու դեպքում ՇԽ-ը համալրվում է ընտրությունների ընթացքում առավելագույն ձայներ հավաքած մյուս կազմակերպություններով:

6. Շահառուների խորհրդում ընտրված ՀԿ ներկայացուցչի կարգավիճակը

Սահմանված կարգով ընտրված անդամները 1-“գ” կետում նշված 5 անդամների հետ կազմում են ՇԽ-ը, որոնց լիազորությունների ժամանակահատվածը կազմում է 2007թ. սեպտեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 28-ը:

Հետագա ընտրությունը յուրաքանչյուր ծրագրային տարում կատարվում է սույն կարգով:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ-ը առաջանորդվում է 2006թ. օգոստոսի 22-ին ընդունված կանոնակարգով:

Միայն ՇԽ-ում ընտրված ներկայացուցիչների թեկնածությունն է պարտադիր դրվում Կառավարման խորհրդում: ՇԽ-ի ներկայացուցչի Կառավարման խորհուրդը ընտրվելու դեպքում ՇԽ-ում այդ թափուր տեղը լրացվում է ամենաբարձր քվեները հավաքած հաջորդ կազմակերպության թեկնածուն:

7. Անցումային դրույթներ

- ✓ Աշխատանքային խումբը լուծարվում է Ընտրական հանձնաժողովի ձևավորմամբ:
- ✓ Ընտրական հանձնաժողովը լուծարվում է ընտրությունների գործընթացի ավարտից մեկ ամիս անց:
- ✓ ՀՄՀ կառավարման մարմիններում հասարակական կազմակերպությունների մասնակցության գործընթացի համակարգումն իրականացվում է կազմված Ընտրական հանձնաժողովի կողմից:
- ✓ Հայտարարության ձևը, քվեաթերթիկի ձևը և ներկայացման հայտի ձևը մշակում է Ընտրական հանձնաժողովի հաստատված ժամկետների շրջանակներում:

- ✓ Ընտրական գործընթացի աշխատանքները համակարգվում են ՀՄՀ ծրագրի գրասենյակի և ՇԽ օգնականի միջոցով:
- ✓ ՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցչի տեղը, հրաժարականի կամ այլ պատճառով թափուր մնալու դեպքում, լրացվում է քվեարկության արդյունքներով՝ առավելագույն ձայներ հավաքած անմիջականորեն հաջորդող կազմակերպությունով:

8. ՀՄՀ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամի ետկանչը

Շահառուների Խորհրդի կոնկրետ անդամի ետկանչը տեղի է ունենում այդ անդամի ընտրությանը մասնակից և քվեաթերթիկ ստացած կազմակերպությունների թվի կեսից ավելիի գրավոր ստորագրությամբ հաստատված պահանջի՝ ՇԽ-ին ներկայացնելու դեպքում:

Ձևավորված աշխատանքային խումբը ի դեմս ՇԽ անդամներ Հ. Ջավադյանի, Ն. Վարդանյանի և Ա. Ոսկանյանի, մշակել են ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ առաջիկա ընտրությունների կարգի նախագիծը, որը ՇԽ-ում և լայն հասարակության քննարկումներից հետո կներկայացվի Հասարակական կազմակերպությունների ընդհանուր ժողովի հաստատմանը:

Սոցիալական ծրագրեր

ՀՀ կառավարությունն ընդունել է Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին որոշում: Որոշումը նպատակ ունի տուն-ինտերնատներում, տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում խնամքի դեպքում ամրագրել ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման չափորոշիչները: Սահմանվել են սննդի, հագուստի և անկողնային սպիտակեղենի, տնտեսական պարագաներով ապահովման, ինչպես նաև տարածքի ու տուն-ինտերնատի հաստիքների նկատմամբ չափաքանակներ: Մինչ օրս չկային նման չափորոշիչներ, և հաստատությունները ղեկավարվել են 1985թ. ԽՍՀՄ համանման չափորոշիչներով:

Նոր չափորոշիչների սահմանումը կնպաստի ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների բարելավմանն ու որակի բարձրացմանը: Խնամքի տրամադրման համար հաստատված չափորոշիչները չափելի և վերահսկելի կդարձնեն ծերերին ու հաշմանդամներին տրամադրվող խնամքի ու սոցիալական սպասարկման ծառայությունները, ինչը, բնականաբար, կանդրադառնա դրանց մատուցման մակարդակի վրա: Որոշման ընդունումը կարևոր է նաև նրանով, որ արդեն ընդունվել է ծեր և հաշմանդամ քաղաքացիներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների լիցենզավորման կարգը, և առանց հաստատված

չափորոշիչների առկայության անհնարին կլինի իրականացնել լիցենզավորման գործընթացը:

Եվրոպական հարևանության քաղաքականություն, զարգացումները

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների ծրագիրն աջակցում է տնտեսական աճին Հայաստանում: ԵՀՔ գործողությունների ծրագիրն ընդունվել է 2006թ. նոյեմբերի 14-ին: Այն բազմակողմանի գերակայությունների ամբողջություն է, որոնք պետք է լուծում ստանան առաջիկա 5 տարիների ընթացքում Եվրոմիության հետ Հայաստանի համագործակցության շրջանակներում: Մասնավորապես, ուշադրություն պետք է հատկացվի հետևյալ 8 գերակա ուղղություններին.

հզորացնել ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը,

բարձրացնել մարդու իրավունքների պահպանումը,

շարունակել տնտեսական զարգացումը և մեծացնել աղքատության հաղթահարմանն ուղղված նախաձեռնությունները,

բարելավել ներդրումային միջավայրը և ուժեղացնել մասնավոր հատվածի վրա հիմնված տնտեսական աճը,

համապատասխանեցնել տնտեսական օրենսդրությունն ու դրա ադմինիստրատիվ կիրառումը,

մշակել այնպիսի էներգետիկ ռազմավարություն, որը կներառի Մեծամորի ատոմակայանի աշխատանքի վաղաժամ դադարեցումը,

աշխատել Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի խաղաղ լուծման ուղղությամբ,

մեծացնել տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ կատարվող քայլերը:

Օժանդակությունն ուղղված է լինելու նաև աղքատության հաղթահարման և սոցիալական անհավասարության կրճատմանը և կենտրոնանալու է հիմնականում տարածքային և տեղական մակարդակների վրա (օրինակ՝ սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում, մասնավորապես կրթական համակարգում): Այս ենթատեքստում կարևորվում է նաև գյուղի տնտեսական զարգացումը և տեղական իշխանությունների կարողությունների բարելավումը:

Բացի լիարժեք գործող շուկայական տնտեսության կայացմանը և հետագա պետական ֆինանսական կառավարման հզորացմանը նպաստող օժանդակությունից, վերոնշյալ ամենը պետք է խթանեն տնտեսական աճը, դրանով իսկ նպաստելով աղքատության հաղթահարմանը և տարածքային անհամասնությունների մեղմմանը: Այս ամենն իրենց հերթին կնպաստեն ներդրումային մթնոլորտի բարելավմանը՝ երաշխավորելով թափանցիկություն, կանխատեսելիություն, գործընթացների պարզեցում և մասնավոր հատվածի հետագա զարգացմանը: Կայուն զարգացման խթանումը բոլոր

համապատասխան ոլորտներում, ներառյալ գյուղատնտեսությունը, հետագա կարևոր խնդիրներն են, որոնց պետք է ուշադրություն դարձվի:

ԱՄՆ ՄՁԳ Հայաստանյան սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր

Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագիր

2006-2011թթ. ընթացքում Սըրվիսիզ գրուփ (TSG) ընկերության կողմից իրականացվող ԱՄՆ ՄՁԳ Հայաստան Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՍՊՀՀ) ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը, կատարելագործել ՀՀ կառավարության ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունները և ընդլայնել սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կարողությունները: Օտարերկրյա և հայ մասնագետների օգնությամբ ծրագիրը տեխնիկական օժանդակություն է տրամադրում սոցիալական պաշտպանության չորս հիմնական ոլորտներում և նպատակ ունի դյուրին դարձնել անցումը ինքնա-ապահովվածության և կայունության՝ միևնույն ժամանակ նվազեցնելով քաղաքացիների կախվածությունը պետական օժանդակությունից՝ բավարարելու հիմնական կարիքները:

Սոցիալական ապահովագրություն

Հայաստանի ներկայիս կենսաթոշակային համակարգում առկա են բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ ցածր կենսաթոշակ, խթանող գործոնների պակաս, կենսաթոշակային վճարումներից խուսափելու բարձր մակարդակ և ծախսատար վարչարարություն: ՍՊՀՀ-ն համագործակցում է ՀՀ կառավարության իր գործընկերների հետ՝ մշակելու և կենսագործելու բարեփոխված և կայուն կենսաթոշակային համակարգ, որը կապահովի ներկա և ապագա թոշակառուների պատշաճ պաշտպանությունը: Ծրագրի աջակցությամբ կմշակվեն անհրաժեշտ օրենքներ և իրավական ակտեր, կիրականացվի բարեփոխումների հնարավոր տարբերակների մոդելավորում և դրանց որակական վերլուծություն՝ ապահովելով որոշումների ընդունումը բարձր տեղեկացվածության միջավայրում, կներդրվեն արդյունավետ և ինտեգրված կառավարման համակարգեր, ինչպես նաև կստեղծվեն անհրաժեշտ տեղեկատվական կառավարման համակարգեր, որոնց շնորհիվ կենսաթոշակային համակարգը կարող է գործել արդյունավետորեն:

Ջրադրվածության ծառայություններ

Հայաստանը ձգտում է բարելավել զբաղվածության ներկայիս ծառայությունները, որոնք դեռևս համապատասխան կերպով չեն բավարարում աշխատուժի առաջարկն ու պահանջարկը: Միևնույն ժամանակ Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական բարդ

խնդիրները խոչընդոտում են աշխատատեղերի ստեղծմանը և հանդիսանում են երկարատև գործազրկության պատճառ: Ծրագիրը համագործակցում է ՀՀ կառավարության իր գործընկերների հետ, որպեսզի մշակվի Աշխատանքի միջազգային կազմակերպության և Եվրամիության չափորոշիչներին համապատասխան Ջբաղվածության ազգային ռազմավարություն: Միջոցառումների շարքում նախատեսվում են օրենքների և իրավական ակտերի փոփոխում ու համապատասխանեցում, աշխատանք փնտրողների համար առաջարկվող ծառայությունների արդիականացում և աշխատաշուկայի ուսումնասիրության հնարավորությունների հզորացում:

Աշխատանքի անվտանգություն և աշխատանքային օրենսգիրք

Հայաստանի Աշխատանքային օրենսգիրքը երաշխավորում է աշխատողների իրավունքները, իսկ օրենսգրքի դրույթները կիրարկելու նպատակով ստեղծվել է Աշխատանքի պետական տեսչությունը: Այնուամենայնիվ, աշխատանքային իրավունքներին, անվտանգությանը և առողջությանն առնչվող չափորոշիչների և կանոնների պակաս կա, իսկ աշխատանքային անվտանգության վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակը ցածր է: ՄՊՀՀ-ն համագործակցում է ՀՀ կառավարության իր գործընկերների հետ՝ մշակելու աշխատանքի և առողջության անվտանգության նորմեր, կատարելագործելու ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև աշխատանք տանելու մասնավոր հատվածի հետ՝ վերոհիշյալ հարցերի վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու նպատակով: ՄՊՀՀ մասնագետները նաև աշխատում են պետական համապատասխան հաստատությունների կարողությունները հզորացնելու ուղղությամբ և աջակցում ռիսկային գնահատման վրա հիմնված տեսչական ստուգումների գործին, ինչը կհանգեցնի Աշխատանքի տեսչության տնտեսապես արդարացված և հավասարակշռված գործընթացի:

Սոցիալական աջակցության ծրագրեր

Հայաստանում բնակչության խոցելի խմբերին մատուցվող սոցիալական աջակցության գերակայությունները սահմանելու քաղաքականության, օրենսդրական կարգավորման և վարչարարական համակարգերի բարելավման անհրաժեշտություն է զգացվում: ՄՊՀՀ-ն նպատակ ունի հզորացնել ՀՀ կառավարության կարողությունները՝ ավելի հասցեական դարձնելու և արդիականացնելու սոցիալական աջակցության ծրագրերը, ընդլայնելու և ուժեղացնելու սոցիալական օժանդակության համակարգերը: Ծրագիրն առաջատար կլինի ՀԿ-ների հետ «սոցիալական համաձայնագրի» խթանման գործում՝ ուղղված ծառայությունների մատուցմանը, սոցիալական աշխատանքի և կամավորության խթանմանը, միևնույն ժամանակ ավելի գործուն կդարձնի սոցիալական աջակցության բարձր որակ ապահովող օրենքները, կանոնակարգերը և կառավարման գործընթացները: